

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ

ՍԱՍՄԱ ՄՀԵՐ



ԵՐԵՎԱՆ

891.99

Ի-75

11  
12  
13  
14  
15  
16  
17  
18  
19  
20  
21  
22  
23  
24  
25  
26  
27  
28  
29  
30  
31  
32  
33  
34  
35  
36  
37  
38  
39  
40  
41  
42  
43  
44  
45  
46  
47  
48  
49  
50  
51  
52  
53  
54  
55  
56  
57  
58  
59  
60  
61  
62  
63  
64  
65  
66  
67  
68  
69  
70  
71  
72  
73  
74  
75  
76  
77  
78  
79  
80  
81  
82  
83  
84  
85  
86  
87  
88  
89  
90  
91  
92  
93  
94  
95  
96  
97  
98  
99  
100  
101  
102  
103  
104  
105  
106  
107  
108  
109  
110  
111  
112  
113  
114  
115  
116  
117  
118  
119  
120  
121  
122  
123  
124  
125  
126  
127  
128  
129  
130  
131  
132  
133  
134  
135  
136  
137  
138  
139  
140  
141  
142  
143  
144  
145  
146  
147  
148  
149  
150  
151  
152  
153  
154  
155  
156  
157  
158  
159  
160  
161  
162  
163  
164  
165  
166  
167  
168  
169  
170  
171  
172  
173  
174  
175  
176  
177  
178  
179  
180  
181  
182  
183  
184  
185  
186  
187  
188  
189  
190  
191  
192  
193  
194  
195  
196  
197  
198  
199  
200  
201  
202  
203  
204  
205  
206  
207  
208  
209  
210  
211  
212  
213  
214  
215  
216  
217  
218  
219  
220  
221  
222  
223  
224  
225  
226  
227  
228  
229  
230  
231  
232  
233  
234  
235  
236  
237  
238  
239  
240  
241  
242  
243  
244  
245  
246  
247  
248  
249  
250  
251  
252  
253  
254  
255  
256  
257  
258  
259  
260  
261  
262  
263  
264  
265  
266  
267  
268  
269  
270  
271  
272  
273  
274  
275  
276  
277  
278  
279  
280  
281  
282  
283  
284  
285  
286  
287  
288  
289  
290  
291  
292  
293  
294  
295  
296  
297  
298  
299  
300  
301  
302  
303  
304  
305  
306  
307  
308  
309  
310  
311  
312  
313  
314  
315  
316  
317  
318  
319  
320  
321  
322  
323  
324  
325  
326  
327  
328  
329  
330  
331  
332  
333  
334  
335  
336  
337  
338  
339  
340  
341  
342  
343  
344  
345  
346  
347  
348  
349  
350  
351  
352  
353  
354  
355  
356  
357  
358  
359  
360  
361  
362  
363  
364  
365  
366  
367  
368  
369  
370  
371  
372  
373  
374  
375  
376  
377  
378  
379  
380  
381  
382  
383  
384  
385  
386  
387  
388  
389  
390  
391  
392  
393  
394  
395  
396  
397  
398  
399  
400  
401  
402  
403  
404  
405  
406  
407  
408  
409  
410  
411  
412  
413  
414  
415  
416  
417  
418  
419  
420  
421  
422  
423  
424  
425  
426  
427  
428  
429  
430  
431  
432  
433  
434  
435  
436  
437  
438  
439  
440  
441  
442  
443  
444  
445  
446  
447  
448  
449  
450  
451  
452  
453  
454  
455  
456  
457  
458  
459  
460  
461  
462  
463  
464  
465  
466  
467  
468  
469  
470  
471  
472  
473  
474  
475  
476  
477  
478  
479  
480  
481  
482  
483  
484  
485  
486  
487  
488  
489  
490  
491  
492  
493  
494  
495  
496  
497  
498  
499  
500  
501  
502  
503  
504  
505  
506  
507  
508  
509  
510  
511  
512  
513  
514  
515  
516  
517  
518  
519  
520  
521  
522  
523  
524  
525  
526  
527  
528  
529  
530  
531  
532  
533  
534  
535  
536  
537  
538  
539  
540  
541  
542  
543  
544  
545  
546  
547  
548  
549  
550  
551  
552  
553  
554  
555  
556  
557  
558  
559  
560  
561  
562  
563  
564  
565  
566  
567  
568  
569  
570  
571  
572  
573  
574  
575  
576  
577  
578  
579  
580  
581  
582  
583  
584  
585  
586  
587  
588  
589  
590  
591  
592  
593  
594  
595  
596  
597  
598  
599  
600  
601  
602  
603  
604  
605  
606  
607  
608  
609  
610  
611  
612  
613  
614  
615  
616  
617  
618  
619  
620  
621  
622  
623  
624  
625  
626  
627  
628  
629  
630  
631  
632  
633  
634  
635  
636  
637  
638  
639  
640  
641  
642  
643  
644  
645  
646  
647  
648  
649  
650  
651  
652  
653  
654  
655  
656  
657  
658  
659  
660  
661  
662  
663  
664  
665  
666  
667  
668  
669  
670  
671  
672  
673  
674  
675  
676  
677  
678  
679  
680  
681  
682  
683  
684  
685  
686  
687  
688  
689  
690  
691  
692  
693  
694  
695  
696  
697  
698  
699  
700  
701  
702  
703  
704  
705  
706  
707  
708  
709  
710  
711  
712  
713  
714  
715  
716  
717  
718  
719  
720  
721  
722  
723  
724  
725  
726  
727  
728  
729  
730  
731  
732  
733  
734  
735  
736  
737  
738  
739  
740  
741  
742  
743  
744  
745  
746  
747  
748  
749  
750  
751  
752  
753  
754  
755  
756  
757  
758  
759  
760  
761  
762  
763  
764  
765  
766  
767  
768  
769  
770  
771  
772  
773  
774  
775  
776  
777  
778  
779  
780  
781  
782  
783  
784  
785  
786  
787  
788  
789  
790  
791  
792  
793  
794  
795  
796  
797  
798  
799  
800  
801  
802  
803  
804  
805  
806  
807  
808  
809  
810  
811  
812  
813  
814  
815  
816  
817  
818  
819  
820  
821  
822  
823  
824  
825  
826  
827  
828  
829  
830  
831  
832  
833  
834  
835  
836  
837  
838  
839  
840  
841  
842  
843  
844  
845  
846  
847  
848  
849  
850  
851  
852  
853  
854  
855  
856  
857  
858  
859  
860  
861  
862  
863  
864  
865  
866  
867  
868  
869  
870  
871  
872  
873  
874  
875  
876  
877  
878  
879  
880  
881  
882  
883  
884  
885  
886  
887  
888  
889  
890  
891  
892  
893  
894  
895  
896  
897  
898  
899  
900  
901  
902  
903  
904  
905  
906  
907  
908  
909  
910  
911  
912  
913  
914  
915  
916  
917  
918  
919  
920  
921  
922  
923  
924  
925  
926  
927  
928  
929  
930  
931  
932  
933  
934  
935  
936  
937  
938  
939  
940  
941  
942  
943  
944  
945  
946  
947  
948  
949  
950  
951  
952  
953  
954  
955  
956  
957  
958  
959  
960  
961  
962  
963  
964  
965  
966  
967  
968  
969  
970  
971  
972  
973  
974  
975  
976  
977  
978  
979  
980  
981  
982  
983  
984  
985  
986  
987  
988  
989  
990  
991  
992  
993  
994  
995  
996  
997  
998  
999  
1000



6 NOV 2011



891.99  
7-75  
LVM  
ԱԿ. ՌԱԿԱԿՅԱՆ,

# ՍԱՍՏԱ ՄՀԵՐ

ԿԻՊԵՐՈ



• 7 6 5 4 3 2 1 •  
3606442.1 9 3 8

29 APR 2013

33037



1585

38

### Ս Ս Ս Մ Ս Մ Հ Ե Ր

Վ Ի Պ Ե Ր Գ

ԱՌՍԱԶԻՆ ԳԼՈՒԽ

Յելավ քաջ Դավիթ՝ իշխան Սասունա,  
 Կըռիվ խոյացավ ի Մարա վըրա:  
 Ու նրա յետնուց Խանդուխ մեծ Տիկին  
 Լիր-լրումն առավ,  
 Լույս աշխարհ բերավ  
 Մեկ արու զավակ՝ տեր ու ժառանգին  
 Զոջանց աթոռքին, Սասմա աշխարքին:

Ու հնուց ավանդ սուրբ սովորութքով  
 Ժողովեցան յիկան Զոջանց Տան պետեր,  
 Մանկան բարուրի բինդերու փոխան  
 Գութանի շղթան փաթեթեցին վրան,  
 Ու ասին իրար Ազնանց ավագներ, —  
 «Թե կոտրեց տղան կապանքն յերկաթին,  
 Նա ազատ կուզե ու կրնա ձեռնել,  
 Նա մեր ցեղեն է՝ առյուծ հոր վորդին»:

Մանուկն եր. ճրչաց, ճըկեց ձեռն ու վոս,  
 Կոտրեց շղթայի ամեն հողն ու զոգ:

Համբավը տարան կովի դեշտ՝ Դավթին.  
Ու պատգամ ճամբեց Դավիթ Սանդուկին.

«Իմ ակն-արեգակ հորըս անունով  
Իմ կորյուն վորդուս  
Կանչեցեք Մհեր.  
Նա պիտի դառնա մեր աշխարհին տեր,—  
Ով գյերկաթն իշխե, իշխանն է մարդուս»:

Ու չար որն հասավ՝  
Մահացավ Դավիթ՝ դյուցազըն-առյուծ,  
Մահացավ Սանդուկ սրտի կակըծուց.  
Մնաց վորդ-մանուկ, անհեր ու անմեր  
Իրենց մեկ հատիկ զավակը՝ Մհեր:

Ու Դավթի լեզբայր, Ճնճըղափորիկ,  
Յելավ, տիրացավ Սասման անառիկ.  
Տեր դարձավ Դավթի գանձին ու կալքին,  
Վոր պահե, շահե Սասմա ժառանգին:

Մհեր թեև դեռ տղա յեր տկար  
Իրեն ուժի տեր Սասուն մարդ չկար:  
Հոր նման պարթև, աչքերն՝ ակն-արեվ,  
Հայացքն՝ արծվենի, ճակատն՝ արքենի,  
Մազերը՝ բոց-հուր,  
Մեջքն ու բազուկներ՝ պողպատիկ ու կուռ,  
Յոթ մարդու կերը կուտեր մեկ ժուժով,

Ով տարավ կ'աճեր՝ նա կ'աճեր ժամով,  
Վեա եր բնութքը, խրոխտ ու ըմբոստ,

Հրով, խանդով վառ.  
Ջայռույթի պահին՝ մթար ու մլար,  
Հանց վոր Նեմրուկ սար:

Սասմա սեպ սարեր վոտներն անդունդին,  
Գլուխն՝ յերկնքին, ամպին ու շանթին,  
Կը վազեր Մհեր շանթի յետևեն,  
Փետուր կ'պոկեր արծիվի թևեն:

Հորեղբայրն ասավ Մհերին մեկ որ.  
«Գյողի հոտաղներ կերցըրին բոլոր  
Մեր հանգն ու ածու. գընա, ակը տու,  
Բան արա, վորդի, պարապ մի նստի»:

Ու կելներ Մհեր առավոտ-լուսին,  
Կը կապեր ուսին  
Գոմշենի մաղախ՝ հացով ու թացով,  
Կերթար ժուռ կուգար Սասմա դար-դուրան,  
Կը հսկեր Սասմա հանդ ու հանդաստան:  
Սասմա դար-դուրան՝ աղբյուր հազարան,  
Նման սուրացող սեզ առյուծներուն՝  
Բաշերն արծաթի՝ փռած քերծիրուն:

Կը թիկներ Մհեր աղբրանց ակին,  
Վողջ հացը կուտեր մեկ բրդուճ արած,  
Ու որը բոլոր կը մնար քաղցած:

Իրկուն տուն դարձին կասեր հորեղբոր.

«— Ես որ ել որըս անցավ անոթի»:  
— Ինչո՞ւ, այ վորդի,  
Մասնա մեր հանդեր լիքն են սինձ, բանջար,  
Քաղե՛, կեր, ինչո՞ւ կմնաս անճար:

Կելներ Մհերը,  
Գուշպերու մեջ կը սողոսկեր,  
Ու վայրենի մեղուներու  
Խորիսխն ազնիվ կը հավաքեր,  
Կուտեր Մհեր ու կուժովնար:  
Կը մագլցեր քերժերն ի վեր,  
Արծիփներու վեա բներեն  
Կը հավաքեր ձրվերն ամեն,  
Ժեռ քարերը իրար կուտար,  
Բոց կըհաներ ժեռեն զնար,  
Կրակ կաներ, կը խորովեր  
Արծվի ձվեր,  
Կուտեր Մհեր ու կուժովնար:  
Կվոյորտեր վորսի համար  
Շամբերու մեջ Անգղա գետի,  
Անտառներով մութ ու մոլոր,  
Առանց հունի, արահետի.  
Ու կըվարզեր հովերու հետ  
Փայլերու սեջ ու վիհերու,  
Յետեն ընկած կըընկեվեթ  
Վարազներու խենթ գիհերու:

Կելներ Մհեր լեռներու վեհ,  
Հանց սուր աշտե՛,

Կատար ու քերժ, ամենաորերձ,  
Ուր չի հասել վիթն իր վոտով,  
Հավքն իր թևով,  
Ու կը ձեներ խանդով խրոխտ,  
Արծվի պես,  
Ազատ ու վիս:

Գոռուն-գոչունով Անտոկա բաշեն  
Մեկ հեղ մեկ վեմ-քար  
Փլել ու կուգար  
Ջոջանց վոչխարի փարախի վրեն:

Մհերն եր վազեց, թիկունքը հզոր  
Քարին դեմ տվավ, քարը կանգ առավ,  
Ու մինչև եսոր  
Կըմնա կանգուն՝ փարախի գլխուն:

Իրկուն տուն դարձին՝ ասավ հորեղբոր.  
— Մասնա ժեռ քարեր շեղբերու նըման  
Տըրեխներն վոտիս՝ մաշեցին, կերան:

— Կարկրտի, հագի, ասավ նեղսրտած  
Ճնճըղափորիկ:  
Քրթմեջաց Մհեր ու լարեց անահ  
Աղեղն հո՞նքերու՝ հորեղբոր վրա:

«— Ես դեհն մեկ որ փորձանք պիտի գա,  
Քաջք ե աժդահա, վիշապ զարհուրիկ,  
Զի լսե սաստի, վոչ ել խրատի»:  
Ահը սիրտն առած

Պոսեց կնոջ հետ Ճնճըղափորիկ:

Ու խորհուրդ արին,

Վոր մեկ պատճառով, հնար-հնճարով,

Վանեն Մհերին

Տնեն ու տեղեն.

Դավով ու խարով, մեկ անդարձ ճամբով,

Վտարեն իսպառ Սասունա հողեն:

Ու իրենց վորդին՝ Փոքրիկ-ճնճըղիկ,

Վոր գիր կը սորվեր Մաբութա սուրբ վանք.

Դարձնեն տեր-ժառանգ

Աղնանց աթոռքին,

Իշխան տիրական Սամանց աշխարքին:

Յելան ճամբեցին ջոջ-Վերգոյի հետ

Մանուկ Մհերին պարեն-պաշարով,

Կապուտկողի բերդ,

Քանդութի հոր քով:

— Բո ջոջ պապ Մհեր,

Հորեղբայրն ասավ,

Բո կարոտն ունի,

Գնա, մարդիկ տես, աշխարհ պտըտի,

Բան սորվի, վորդի»:

Ու յեկավ Սհեր, հասավ Կապուտկող,

Իրեն պապի հող:

Յոթ տարի բոլոր մնաց պապոնց տունն,

Մկուռնդ կըխաղար քեռիներու հետ,

Կելներ վորսասար,

Ու նրանց հավսար՝

Կախի կը մտներ՝ հագած ճոշ-ասպար:

Յեղավ վոր պապը որն հասավ, մեռավ:

Ու թեվա-թորոս՝ անդրանիկ քեռին,

Կանչեց Մհերին, ծաղրերես ասավ. —

«— Տո, տխմար Մհեր, դու չըգիտես վոր,

Բո հոր բռին եր Սասունը հորր.

Բո հալըր ուներ տըկերով վոսկի,

Հողեր ու գյուղեր, ավան ու ապատ,

Հուր-հրեղեն ձին,

Ու թուր—Կայծակին:

Դու հիմի անհող քաջ գաս մեր դռան.

Հորեղբայրդ ուտե քո հորըդ գանձը,

Դու ոտար յերկիր մաշես քո անձը:

Վայ, Ջոջանց խելար, մուխըդ չմարի»:

Մհերն եր. յեկավ

Լախտը ձեռքն առավ,

Ճամբան վոտքն առավ,

Վարդեց ու հասավ Բանձրաթու Սասուն,

Վոր յեկավ Սասունն, ծուներ իջավ գետին,

Համբուրեց հողը Սասմա աշխարքին.

Ու սուրաց հանց նետ՝ դեպ Առյուծաբերդ,

Աղնանց հնութ յերդ:

Իրիկնաժամին մտավ դարբասն հոր,

Ու լցված սրտով ասավ հորեղբոր. —

— Յես լինեմ Սասմա ժառանգ ու իշխան,  
Ինձ հսպես ձգես ուրիշի դռան...

Ոոսքը դեռ բերնին՝ ձընճըղափորիկ

Վոտ զարկեց տափին,

Գոռաց ահառիկ,

— Անիծվի են մարդ, վոր մեծ-սիրտ վորքին

Թևի տակ կառնի ի վերաշխարհին:

Լախան առավ Մհեր՝ վոր զարկեր նրան,

Ձեռը չգնաց հորեղբոր վրան:

Գազազեց սաստիկ ձընճըղափորիկ,

Գոռաց ահառիկ,

Ու մահակն առավ

Մեծեց Մհերին, անեն դուրս արավ:

Յեռ դառավ Մհեր, վոր զարկե նրան,

Նորեն Մհերի ձեռքը չգնաց

Հորեղբոր վրան:

Ու յելավ գնաց լալով, լաց-աղբով,

Յեկավ հոր ու մոր գերեզմանի քով,

Թողութլուն խնդրեց հորեն ու մորեն,

Հեռացավ Սասմա հողեն ու ջրեն:

#### ՓԼՈՒԿԻՆ ՅԵՐԵՄԻՅԱ

— Մհեր զուրկ ու մերկ, ծարավ, անոթի  
Ու վտարանգի,

Հեռուն աչքն առավ,

Ճամբան վոտքն առավ,

Գնաց ու հասավ Ճապաղջուրի դաշտ:

Վոր յեկավ հասավ Ճապաղջուրի դաշտ,

Տեսավ՝ ամառվա շոգին-կրակին,

Նստել է ծառի քաղցրիկ շրվաքին

Հարուստ մարդու մին կնոջ հետ մեկտեղ,

Կը խմե գինին, կուտե ճըվաձեղ:

— Բարով քեզի, բարին քեզի,

Մհեր ասավ,

Անոթի յեմ, հաց տուր ուտեմ:

Հարուստն ասավ.— Արտս գնա,

Խլճերն հանե, քաղհան արա,

Քրտինք թափե, հաց կուտամ՝ կե:

Յեկավ Մհեր ճորտերու քով,

Տեսավ՝ ճորտեր

Յեղունգներով, ագուռներով  
Խիճ կը հանեն արտի հողեն,  
Արտ կը մաքրեն, գուղձեն, կոշտեն,  
Մուխտտեն:

Ինքն ել նման ձեռնեց գործին,  
Մնկածալիկ, արևբոցին,  
Մեջքակոտոր ու քրտնաթոր  
Դատեց, բանավ մինչև իրկուն.

Յեղավ իրկուն,  
Ճորտերու հեա դառ ու դադրած  
Մտավ մեկ հլուղ՝ դեջ ու խավար,  
Իրար վրա յեղան ծվար:  
Մեկ աստուճ հաց տըվին՝ ուտի,  
Մեկ չոր խշտի պառկի, քընի:

Մհեր պառկեց, քուն չըտարավ.  
Աչք չըփակեց ու վողջ գիշեր  
Աշխարհի բան միտք կաներ միտք  
Ձոջանց Մհեր.

«Ռամիկ շարադաա  
Չոր կուտե.  
Հարուստ պարապ-մարդ  
Մեղը կուտե»:

Աստուճ կանուխ ճորտեր բոլոր  
Յեղան վոտքի,  
Անխոս, անձեն կանգնան բանի:  
Ու համբերեց մեկ-յերկու որ,

Վրա յերեքին  
Յոսեց Մհեր մեջ իր մաքին.  
«Ես ել կյանք չե.  
Ես չար մահ ե,  
Հացն ու ջուրը ես պիղծ տեղի—  
Ոձու լեղին...»

Լախտը ձեռքն առավ,  
Ճամբան վոտքն առավ,  
Գընաց ու մտավ Վոստանա քաղաք:  
Ու մեկ փոնապան

Մհերին առավ իրեն ձեռքի տակ:  
Մհեր որ բուր ջուր, փայտ կը կըրեր  
Ու գիշերն անքուն՝ ալուր կըմաղեր,

Խմոր կը շաղվեր, խմոր կը գնդեր.  
Գլուխը բարձեն, աչքը չըկպած՝  
Կը կանգներ վոտաց:  
Իր բաժին հացը չեր բավե իրեն,  
Հաց կառներ կուտի ձեռք ընկած տեղեն:

Փոնապան տեսավ,  
Բարկացավ, ասավ:  
— Տո, ծակաչք, ծակփոր,  
Սասունա վիշապ.  
Ի՞նչ մնաց՝ ծախեմ,  
Կերար վողջ-բոլոր:  
Աչքերը Մհեր խոլորեց վրան,  
Վախեն ձեն ու ձուն կտրեց փոնապան,

Ու հացերն առավ, փակի տակ դրավ:  
Մհեր մեկ մատով փականք կրկոտրեր,  
Հացերը կուտեր:  
Փռնապան նորեն սաստեց ու ասավ.  
—Մհեր, դու ինչո՞ւ փականք կրկոտրես,  
Հացերը կուտես:  
Ուրիշի հացին իրավունք չունես,  
Որե՞նք կա, որե՞նք,  
Պատիժ կա, պատիժ:

Պողպատ իր ուսեր վեր քաշեց Մհեր,  
Ասավ զարմացած.  
—Եդ պատիժ, որենք յես չեմ հասկանա:  
Բա ես որե՞նք ե՛  
Դրժար բաները յես եմ անողը,  
Համով բաները դու յես ուտողը,  
Թե գանձ կապողը:

Ու Վոստանա քաղքեն Մհեր  
Սիրտը խուրճը չըվեց գրնաց,  
Յեկավ հասավ Լաթարա հող,  
Մտավ մեկ գյող:

Ռեսն եր. առավ վեստ Մհերին,  
Հանց վոր ճորտի, հացափորի,  
Ճամբեց կոռի,  
Ճամբեց կոռի գաշտն ու մերին  
Ու ալգեստան ավատի տան:

Որն ե հասել,  
Դեղջուկ, ուսիկ արտն են հնձել,  
Հունձը փնջել, բերել կալսել  
Ու կալի մեջ դիզել շեղջ-շեղջ  
Ցուցլալեն վոսկի ցորեն:

Յեկավ հեռվեն մեկ ձեր գուսան,  
Ձեռքին քընար՝ գանգ մի յեզան,  
Յեղջուրներեն յերեք հատ լար  
Բաշած՝ ի վար:

Բարեվ տվավ, նստավ խուրճին,  
Ջարկեց դաշըն պիրկ լարերուն,  
Փառքը յերգեց ավուր հացին:

«Փնուք տվեք հացին,  
Ապա աստըծուն.  
Հացն ե աշխարքիս  
Իսկն ազատություն:

Ասենք բուխ սրտով  
Ռամկին արև շատ,  
Պահող-շահողին  
Աշխարհ-արարատ:

Դովքն արեք ուամկին,  
Ռամկի սուրբ գործին,  
Ձեր ազատության,  
Ձեր արդար հացին»:

1585  
38

Շարան-շարան յերկնուց իջան  
Հալք ու թռչուն,  
Մլվլացին շուրջը կալին  
Ու բաժիններն առան թռան:

Յեկավ իշխան են արտատեր,  
Կիսեց տարավ ցորենի շեղջ,  
Իրար յետնուց յեկան հասան  
Թե գեղապետ, թե խանու թպան,  
Առան տարան բեռով-թեռով,  
Հարկի դիմաց, վաշխ ու պարտքին  
Իր աչքի լույս ցորեն—վոսկին:  
Բան չըմնաց խեղճ ուսմիկին—  
Լոկ ծեղ ու կուտ կալատակին:

Ես վոր տեսավ՝ կրակ ու բոց  
Բռնկեցավ Մհերին ծոց.  
Ախ կը քաշեր որ ու գիշեր  
Ու կը խորհեր մոռյլ Մհեր:  
«Ռամիկ, մշակ,  
Դուք կը լցնեք  
Մառան, մարագ  
Հոր ու հնձան  
Թե իշխանին, թե մեծատան,  
Վոր անոթի, մերկ ի մորեն  
Մնաք նորեն»:

Ռեսը կանչեց, ասավ—«Մհեր,  
Հարկ տուր հիմի,  
Գլխահարկ տուր թագավորի»:

— Ի՞նչ հարկ, թե՛նչ կոտ,  
Ի՞նչ թագավոր,  
Պարտք ե տվել, կ'ուզե հիմի,  
Ասավ խիզախ Մհերն Ազնանց:

Ռեսը ձենեց, ձենին լեկան  
Գեղ-գեղովի, ճորտ ու մշակ,  
Ուսերով վար՝ փոկ ու ճուպան,  
Անթերու տակ՝ բիր ու մահակ:

— Կապեք, ասավ, կապեք ձեռ-վոտ,  
Յերկաթ զարկեք, տարեք ձգեք  
Մութ բռնատուն:

— Վայ ձեզ, ճորտեր, խեղճ ու տխմար,  
Ինձ զորավիզ կանգնելու տեղ  
Վոսոխին դեմ ձեր հողեառ,  
Վերցրել եք զեն՝  
Թափվել վրաս, հանց ձեր անեղ  
Թշնամու դեմ...  
Մեկդի քաշվեք, մեկդի հիմի,  
Ճամբան տվեք, թող ոեսը գա,  
Թագավորի հարկը տանի...  
Ասավ Մհեր,  
Ու անառիկ բիրդի նման  
Կանգնավ մնաց:  
Գեղ-գեղովի ձեռք զարկեցին  
Մհեր բռնեն.  
Մհեր հոնքիր ժողվեց իրար,  
Լախտը փարտեց.  
Ծայրը լախտին դիպավ սանդին,

Աղասանդը փրթավ տեղեն,  
Թոռով գնաց՝ կրակ կտրած,  
Ու կըթռնի մինչև հիմի:  
Շորշոփն հզոր՝ լարած լախտին,  
Շանթի նման փոեց գետին,  
Փոեց գետին գեղապետին  
Յոթըն որվա մեռելի պես:

Գեղ-գեղովի ես վոր տեսան,  
Գուժար փախան, յեղան ցրիվ,  
Հանց չոր խոփվ քամու բերան,  
Մերպ ու ծործոր շունչերն առան»:

— Յեկավ Մհեր սիրաը՝ խոլոր,  
Միտքը՝ մոլոր,  
Ճամբա ընկավ,  
Ճամբան տեսավ՝  
Սարի կանանչ մարմանդներով,  
Ջորի մարմանջ աղբյուրներով,  
Վայրի հավքեր ուրախ-զվարթ  
Կը թռնեյին, ծափ կուտային,  
Տաղով-խաղով, ուրախ-զվարթ:  
Մհեր դարձավ՝ նրանց ասավ.  
«Յերանիկ ձեզ, վայրի հավքեր,  
Դուք որհնած եք, մարդն անիծած,  
Ազատ, անպարտ,  
Ընկերներով ու ազպոր պես  
Կ'ապրիք անհող ու սեր կանեք.  
Վնչ արատտեր կըձանչնաք,

Վնչ հարկ ու կոռ, վնչ թագավոր,  
Յերանիկ ձեզ, վայրի հավքեր...»

Անձնահուր Մհեր  
Չվեց ու հասավ Պղնձե-քաղաք:  
Պղնձե-քաղքի պարիսպներ ու դուռ  
Պինդ-պղնձակուռ.  
Կամուրջ, բուրգ ու բերդ՝  
Պինդ-պղնձակերա:  
Ժուռ յեկավ քաղքի գոհն ու փողան  
Հազար մանեման.  
Կանգ առավ մոլոր մեջ պողոտային  
Առջև փառանցփառ մեկ ապարանքին.  
Տեսավ՝ վարպետներ բանձրիկ պատերեն  
Կը կանչեն ամուր.  
— Եհեյ, քար բերեք,  
Շաղախ ու խիպար:  
Թանվորներ առած՝ ուներնին—մեջքին,  
Քարեր ահառիկ, դուլլեր ահագին,  
Ու սանդուխներով վոլոր-վոլորուն,  
Կ'ելնեն ու կ'իջնեն,  
Մնկներով՝ դեղեվ,  
Սրտով՝ հեվիհեվ:

Ու տեսավ Մհեր մեկ տղա բանվոր՝  
Քարը շալակին բանձրաքաշ տեղեն  
Վար ընկավ գետին ու յեղավ ցրեխ  
Փլուխն ու ըղեղ...

— Ես վոր տեսալ Ազնանց Մհեր,  
Հանց փոթորանք ծովու վրա,  
Վոր հազարան վագրերու պես,  
Կըմումոա ու կը կորզե  
Պատ ու պատնեշ,

Բորբ ու բորբոք դարձալ ասալ  
Իրեն սրտին ու աշխարքին.

— Ե՛յ, դուք, մշակ, ճորտ ու բանվորք,  
Կը շինեք հար դուրք ու դարպաս,  
Ու ձեզ համար  
Լուծ ու անուր, զնդան ամուր:

Յերթամ շինեմ բերդ ու սլատվար՝  
Նեզ ու դժար որվա համար.  
Առնեմ իմ հոր զենքերն ու ձին,  
Ու Սասմանց տան կուռ կտրիճներ՝  
Կովիս համար վիզ ու սատար,  
Յեխնեք գուպար  
Աշխարքի դեմ զրկող ու չար.  
Վողջ ավերինք  
Ու ուսկուլթյուն բերենք աշխարհ,  
Ռամկի որենք ու իրավունք,  
Վոր տեր դառնա ուսիկն իրեն  
Սուրբ վաստակին, արդար հացին»:

**ՅԵՐՐՈՐԴ ՂԱՌԻՆ**

Ու կրակված թռալ Մհեր,  
Յեկալ, յելալ  
Միմ ու Սասուն—Սասունա սար:  
Սասունա սար՝ վեստ ու վիթխար,  
Հանց յերկնամուխ  
Ցլլի գլուխ,  
Վոր կը փնչե գոռ ու ահուիկ  
Բուք-մըրըրիկ:  
Կիրճերու մեջ Սասմա գետեր,  
Հանց մերկ ու կեռ կայծակ-թրեր,  
Են ձյուհափառ սեզ Մովսսար,  
Վոր աստղերուն ե հավասար:

Կը դեգերեր Մհեր անդուլ  
Անգրդ գետեն մինչ Սեղան-սար,  
Մարաթուքեն՝ Ծծմակաքիթ:  
Ու կը փնտրեր բերդի համար  
Բար ու կապան, լեռ, առապար,  
Անկ ու հարմար:

Որանց մեկ որ՝ մուժն ու մուրը՝  
Մեջ կապանին, խոր ծմակին,  
Մեկ վագր վիրագ ու ահագին,  
Դեմ Մհերին խոպաց, վաճճեց  
Ու մռնչաց խոլ զարհուրիկ.  
Մհեր լախուր քաշեց, զարկեց,  
Ճեղքեց զանգը վագրի ահուիկ,  
Միսը կերավ, մորթը ձգեց  
Կուռ թիկունքին, գլխու վըրան՝  
Գիշտ ու խալամ:

Գտավ Մհեր մեկ խրոխտ լեռ  
Մեջ բավիղին Մարաթուքա,  
Ջերդ բանձրիկ գահ,  
Կողն ու կոնակ՝ գուղձ յերկաթին,  
Ուր կընայեն ամեն դիեն  
Վիհեր մթին վեժ-անդունդին.  
Քար ու կապան, լեռ առապար,  
Բերդի հաճար անկ ու հարձար:

Ազնանց Մհեր լախտն արավ ձեռ  
Վազեց իջավ Տարոնա դաշտ.  
Տարոնա դաշտ մեծ գետ ունի,  
Խոր ու բըրբըր,  
Ու անունն է Արածանի.  
Հարյուր քառսուն վտակ ու վետ,  
Կը խառնվեն իրարու հետ  
Ու կը հյուսեն Տարոնա գետ:

Տեսավ Մհեր՝ ջուրն է հորդել,  
Վարար-վարար,  
Ու կ'ավերե գեղ ու հանդեր,  
Արոտ ու վար  
Շինականին ու ռամիկին:  
Խղճաց Մհեր, մրձուռ սրտով  
Վարդեց հասավ Քարքե սարին.  
Մեկ ապառաժ վեմ վիթխարի  
Ժեռ քարերեն Քարքե սարի  
Մղեց, բերեց

Գլոր-գլոր,

Դղոր-դղոր

Բերեց ձգեց են գետի մեջ:  
Գեաը բաժնեց լերկու ճյուղի,  
Մեկն աջ գնաց ու մեկը՝ ձախ:  
Ջուրերն իջան,  
Առաջվա պես արեվերես  
Յելան գեղերն ու հանդաստան  
Շինականին ու ռամիկին:

Տարոնացիք ես վոր տեսան  
Չարմացք ահեն ջուր կտրեցան.  
Փախան, մտան  
Արեվ-Առինճ մեծ շահաստան,  
Վիշապարերդ, Արուբակերտ:  
Արուրի դուրք քառսուն նիգով  
Իրենց հեանուց պինդ գոցեցին:

Մհեր հասավ լախտը ձեռին  
Ու յոթն հեղ վորոտումունքով  
Կոփեց բերդի դուրք արուրին,  
Դոփեց գետին պողպատ վոտքով,  
Ձենը ձգեց անհղագոյ,  
Ծխնու վրա դողաց դողդոջ  
Դուրք արուրին:

«Ե՛յ Տարոնա իշխան-ջոջեր,  
Ականթոթափ,  
Ժողվեք բերեք, տվեք ինձի  
Ձեր արծաթով, հացով-ջրով,  
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,  
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն.  
Բերեք հազար բանվոր, մշակ,  
Վոր քար կըրեն, յերկաթ կըռեն,  
Բերեք հազար բանվոր, մշակ,  
Վոր հող թալեն, արճիճ հալեն:  
Բերեք թե վոյ, ձեր տուն ու տեղ  
Ավեր կ'անեմ, հող ու աղուր,  
Չորսդին կուտամ՝ հողմերուն կուր:

Ու Մհերի վոտքը լեկան  
Աղ ու հացով, խնդիրք-լացով,  
Արեվ-Առինճ քաղքի շոջեր՝  
Վաճառապետ ու զանձաշատ,  
Ականթոթափ,  
Բերին տվին հացն ու արծաթ,  
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,  
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն,

Բերին հազար բանվոր, մշակ,  
Վոր քար կըրեն, յերկաթ կըռեն,  
Բերին հազար բանվոր, մշակ,  
Վոր հող թալեն, արճիճ հալեն:

Վարպետ-բանվոր Մհեր առավ,  
Գումար տարավ  
Բանձրիկ Սասուն, Սասնա աշխարհ,  
Խոլ ու խոժոռ քերծի վրա:  
Ու շինեցին հզոր քերծին  
Բերդ ու պատվար, զերդ կուռ ասպար,  
Կայծակ քարով ու վորձ քարով.  
Կամրջակապ փապ ու վիրապ:  
Արճիճ լցրին կրի տեղակ  
Մեջ հիմերուն,  
Արճիճ լցրին խիճի տեղակ  
Մեջ վորմերուն:  
Կանգնեցրին զոռ աշտարակ  
Սուր սնարին՝ վես ու անել,  
Ուր լոկ արծվի թեփն ե դիպել:  
Աղխ ու նիգով մուխ յերկաթի  
Դուռ-դուանդի:  
Ու շինեցին խըրոխտ բուրգեր՝  
Բանձր ու բոլոր,  
Պատուհաններ՝ աչքով խոլոր,  
Կը նայելին ճամբաներուն  
Վոլոր-մոլոր,  
Թե հեռավոր, թե մոտավոր:

Մհեր հասավ լախար ձեռին  
Ու յոթն հեղ վորոտմունքով  
Կոփեց բերդի դուրք արուրին,  
Դոփեց գետին պողպատ վոտքով,  
Ձենը ձգեց անհղազոչ,  
Ծխնու վրա դողաց դողդոջ  
Դուրք արուրին:

«Ե՛յ Տարոնա իշխան-ջոջեր,  
Ականթոթափ,  
Ժողվեք բերեք, տվեք ինձի  
Ձեր արծաթով, հացով-ջրով,  
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,  
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն.  
Բերեք հազար բանվոր, մշակ,  
Վոր քար կրրեն, լերկաթ կրռեն,  
Բերեք հազար բանվոր, մշակ,  
Վոր հող թալեն, արճիճ հալեն:  
Բերեք թե վոչ, ձեր տուն ու տեղ  
Ավեր կ'անեմ, հող ու աղուր,  
Չորսդին կուտամ՝ հողմերուն կուր:

Ու Մհերի վոտքը լեկան  
Աղ ու հացով, խնդիրք-լացով,  
Արեվ-Առինճ քաղքի ջոջեր՝  
Վաճառապետ ու գանձաշատ,  
Ականթոթափ,  
Բերին տվին հացն ու արծաթ,  
Հարուր վարպետ, վոր վեմ տաշեն,  
Հարուր վարպետ, վոր պատ քաշեն,

Բերին հազար բանվոր, մշակ,  
Վոր քար կրրեն, յերկաթ կրռեն,  
Բերին հազար բանվոր, մշակ,  
Վոր հող թալեն, արճիճ հալեն:

Վարպետ-բանվոր Մհեր առավ,  
Գումար տարավ  
Բանձրիկ Սասուն, Սասմա աշխարհ,  
Խոլ ու խոժոռ քերծի վրա:  
Ու շինեցին հզոր քերծին  
Բերդ ու պատվար, գերդ կուռ ասպար,  
Կայծակ քարով ու վորձ քարով.  
Կամրջակապ փապ ու վիրապ:  
Արճիճ լցրին կրի տեղակ  
Մեջ հիմերուն,  
Արճիճ լցրին խիճի տեղակ  
Մեջ վորմերուն:  
Կանգնեցրին գոռ աշտարակ  
Սուր սնարին՝ վես ու աներ,  
Ուր լոկ արծվի թեփե ե դիպել:  
Աղխ ու նիգով մուխ լերկաթի  
Դուռ-դռանդի:  
Ու շինեցին խըրոխտ բուրգեր՝  
Բանձր ու բուրբ,  
Պատուհաններ՝ աչքով խուրբ,  
Կը նայելին ճամբաներուն  
Վոլոր-մուրբ,  
Թե հեռավոր, թե մտտավոր:

Ու անունը բերդի դրավ՝  
«Մհերի Գեն».

Անունը սոսկ, բերդի վրան  
Մինչև ետը սպառազեն  
Գոռ պահապան:

Գնաց Մհեր՝ բարկ ու կըրակ,  
Իջավ Սասմա Աթոռ-քաղաք.  
Արև նոր եր աչքը բացել,  
Վողջ յերկինքն եր ծով-ծիրանի,  
Ծուխը կ'ելներ պալան-պալան  
Ակուտներեն ու յերդերեն:  
Ու որն ետը տոն—կիրակի,  
Ժամն եր կանգնած պատարագի:  
Մհեր մտավ Առյուծաբերդ,  
Ջոջանց իր տուն,  
Յոթը կողպեք պատուհանեն  
Հանեց Դավթի գրահ ու վերտ,  
Վոսկի գոտիկ՝ յոթը պատիկ.  
Վահան լանջքին,  
Վառ սաղավարտ դրավ գլխին,  
Կապեց մեջքին  
Թուր—Հավրունին, Թուր—Կայծակին:  
Յելավ վոտքով զարկեք գոմի  
Տասը նիզով աղխուկ դռան,  
Ընկավ ջախջախ ու ծինեհան  
Դուռն յերկաթի.  
Հանեց Դավթի  
Ձին հրեղեն՝ բռնած բաշեն:

Ձեռքը նյուսին դրավ՝ կեծնի,  
Ճնճղափորիկ հասավ ժամեն,  
Յեկավ մթնած՝ վրան թնդաց.  
Ու արմուկեն քաշեց կատպած.  
«Ձքվիս, Մհեր,  
Չար, անառակ,  
Նաչըդ տեսնեմ,  
Գետինն անցնես»:

Հանց արմուկով հըրեց Մհեր  
Հետ հորեղբոր,  
Արմուկն առավ ալուաներուն  
Ու ալուաներն լեղան փշուր  
Հետ հորեղբոր:

Հեծավ Մհերն արևազուն,  
Հեծավ խթեց հրեղեն ձին:  
Թռավ կանգնեց քաղաքամեջ.  
Աջ ու ձեռքին  
Հազարաչող թուր—Կայծակին:  
Հանց գոռ-ամպրոպ Անդոկ լեռան  
Կը կայծկլտե—կը վորոտա,  
Դոռաց Մհեր Սասնու վրան.  
— Ե՛յ գուք, Սասմա ձեռ ու ձեռ,  
Ե՛յ գուք, գեղղուկ, մշակ ու ճորտ,  
Ձեռնել գիտցող նիզակ ու նետ,  
Ձեռնել գիտցող գուրգ ու գեղարդ.  
Թող ամենքը ասպաղինվեն,  
Գան ինձի հետ—  
Քանդենք հիմեն աշխարհը չար  
Ու ուսկություն բերենք աշխարհ,

Ռամկի որենք ու իրավունք,  
Վոր տեր դառնա ոսմիկն իրեն  
Արդար հացին, սուրբ վաստակին:

Ու յետ յեկավ Մհերի ձեն  
Մալնո ձորեն, Ծոփաց Գուսեն,  
Ճապաղ Ջուրեն, Մշու Դուրեն,  
Խուժա Բարեն, Գրգուռ սարեն,  
Փովեց նորեն  
Գոռգոռալեն, հաղարածեն,  
Սասնո վրբեն:

### ՉՈՐՐՈՐԳ ՊԼՈՒՆ

Ջոջ տան պետեր, խոլ հսկաներ—  
Ջենով Ոհան ու Խոր Գուսան,  
Թառ—Ճնճղուկ ու Խոր—Մանուկ,  
Վժիկ—Մխո, Բուճած—Կուռիկ,  
Ջոջ—Վիրապ ու Ճող—Վիրապ,  
Վոստանիկներ ու Սեպուհներ,  
Ու Աղատներ ու Ավատներ,  
Հաղած-կապած վերտ ու վահան,  
Սուր ու աշտե, տեգ ու նիզակ,  
Իրենց առջեֆն առած-բերած  
Հոժ ժողովուրդ—գեղ ու քաղաք,  
Գեղջուկ, մշակ, ճորտ ու ոսմիկ,  
Հաղած—կապած զրահ շապիկ,  
Գունդ ու մկունդ, պարա ու աղեղ,  
Գրոն ավին, յեկան մեկտեղ  
Դեմ Մհերին ու ձենեցին,—  
— Ե՛յ դեվ Մհեր,  
Վար եջ ձիեն, ժամտուն գրնա,  
Լնց, որտա, ու դարձ արա  
Խորհուրդներեն չար սատանին:

Կռթիվ կուզես... Մեղքը վըրհզ,  
Ետը և եթ  
Քեզ կը խառնենք հազար տարվա  
Մեռերոյ հետ...

Մհեր կեցալ անպատասխան,  
Անպատասխան ընտ անսասան:  
Բոլոր մեկտեղ դառան յեա-յեա,  
Բոլոր մեկտեղ կանգնան մեկին,  
Բոլոր մեկտեղ սալ ու գետին  
Վտանքով պիրկ՝ պինդ դոփեցին,  
Տեղերով կուռ հանց կույի կանչ  
Վահանները պինդ կոփեցին,  
Թինդ ու թափով թռան առաջ,  
Շկահելով, գոռգոռալով,  
Հողմի նման խիստ խոյացան,  
Յեկան վեա-վեա ու իրենց հետ  
Ամպ ու փոշի, մուգտ ու մղեղ,  
Կուռ թ ալին,  
Կուռ թ ալին,  
Կուռ կուռփներ ցցած ահեղ,  
Թռան, յեկան, յեկան հասան՝  
Մհեր գլխեն,  
Մհեր ճմլեն,—  
Մհեր խթեց Չին հրեղեն  
Ու մխրճվեց մեջ ամբոխին.  
Ճեղքեց ամբոխն յերկու մասի,  
Մեկն աջ թալեց ու մեկը ձախ.  
Կեան՝ արեցաթ, կեան՝ արեպատ,  
Մղեց, յեկալ, կանգնալ խիզախ  
Դեմ-հանդիման, ճակատ-ճակատ,

Իշխաններուն, Սեպուհներուն,  
Ավատներուն, Ազատներուն,  
Բաշեց գարկեց Թուր—Հավլունին,  
Թուր—Հավլունին, հանց հուր—կայծակ  
Մեջ մթազին ամպ ու դամպին,  
Կարեց, թափեց,  
Այրեց, լափեց  
Ով վոր ընկալ թրի վրան,  
Ինչ վոր ընկալ հրի բերան:  
Արյունն յեկալ գոչ-գոչ գնաց...  
Մնացածներ գուճար փախան,  
Յեղան ցրիվ, հանց չոր խոփով...

Սև ազտափի մոռչլ կառանչ՝  
Սև լուրն հասալ Սասմա ահանջ:  
Իշխան, ջոջեր, ժամերեցներ  
Յեկան ժամի կոչնակ ավին.  
Ու չորս գլին ծեր-հալեվոր,  
Մեր ու մանուկ, աղքատ, հարուստ  
Ժամ ժողվեցան, նորեն յեկան,  
Ալիք-ալիք ծովու նման,  
Իշխան, ջոջեր, ժամերեցներ  
Ծով կապեցին ժամի բոլոր:  
Ու իրենց հետ յերգումարդով  
Սասուն լման  
Նզովք արին գոռ Մհերին.  
— Անիծվես դու,  
Չարըդ Մհեր,  
Դու, ներհակ նեռ,

Ինչ, դե՛լ ցասման,  
Ինչ, վոր կուզես՝ աշխարհ քանդես,  
Ծարավ մընաս ու անոթի,  
Անճեա մընաս ու անորդի,  
Մահ ուզենաս, չգտնես մահ,  
Մինչև Բրիտտոս դատաստան գա՝  
Քո գատ կըտրես:

Ու անեծքը հասավ բռնեց  
Մհերին.  
Գեաինն էլ չեր կարող տանի  
Մհերին.  
Զիու վտաքը ծունկերն՝ ի վեր  
Հողերու մեջ կը մխրճվեր:  
Մհեր ուժով, ուժով-զորով  
Հասավ հոր-մոր գերեզմանին,  
Գրկեց հողվարքն ասավ լալով.  
— Վեր լել, հերիկ,  
Վեր յել, մերիկ,  
Մեկ ճար արեք  
Զեր Մհերին:

Ու հերն ու մեր գերեզմանեն  
Լացին, ասին.  
— Գնն, վորդի, Տոստան բռնք,  
Ազուավու այր,  
Ու քար քաղե, ավազ մաղե,  
Լաց ու զղչա,  
Վոր Բրիտտոս քեզի խղճա,  
Թողու թյուն տա:

Յերկիրն էլ չեր ուզի տանի  
Մհերին.  
Արեգակն էլ՝ աչքի նման  
Մեռելին,  
Պաղ կընայեր ու լույս չեր տա  
Մհերին:  
Զիու վտաքը ծունկերն ի վեր  
Հողերու մեջ կը մխրճվեր.  
Ուժով—զորով գնաց Մհեր,  
Յեկավ հասավ Վանա ծովուն:  
Ազուավու Քար բացվեց մեկեն,  
Առավ-կալավ մեջ իբ ծոցին  
Մհերն ու Զին:  
Ազուավու Քար գոցվեց նորն  
Նըրա վըրեն:

Մեջ անձավին անմահ, անմեռ,  
Կա ու կապրի Յասման Մհեր,  
Գլխու վերև—նըսեմ ճրագ՝  
Գիշեր-ցերեկ հավիտյան վառ.  
Խմած ջուրը՝ մեկ ըսկահակ.  
Հացը որեն՝ յերեք նշխար:  
Մեկ խուրճ ատույտ Զիու ատաջ  
Ամառ-ձմեռ դալար—կանաչ  
Ու կըմտքե անմահ Մհեր  
Աշխարքի բան.  
Աշխարքի բան, հանց վոր իժ-ոձ,  
Կը խեթըթե սիրտն ու հողին:  
Ու վոչ կուլա, վոչ կը զղչա,

Վոր Բրիտանոս խղճա-զթա,  
Վես արարքքին թողություն աս:

Ու թիւ կուզան  
Բարդ-բարդ ամպեր՝ հրով-չրով,  
Լույս Մասխի վեհ գագաթեն,  
Սիփան սարեն, Միսլան ծովեն,  
Կայծակ կուտան  
Ազուավու լերկ Բարի վրեն  
Ու Մհերի գոց Դուռն ի վեր,  
Կը գողգողան, կը լորրոտան,  
Փըխրին կերթան:

Մհեր այրեն, Բարի խորեն  
Խոլ կը թնդա, դզորդ կուտա  
Բարկութենեն:  
Կը վրընջա ու կը դոփե  
Ձին սանձակոծ, կրակ ու բոց,  
Ու կը ժածեն Մհերն ու Ձրն  
Աշխարհն հիւժեն:

Ամեն տարի որն Համբարձման,  
Յերբ իրարու համբույր կուտան  
Յերկինք-յերկիր ու հուր ու շուր,  
Ամեն տարի որն համբարձման,  
Յերբ կը բացվի ամեն փակ դուռ,  
Կը վտխենան գեղ ու քաղաք,  
Թե կը բացվի Ազուավու Բար,  
Կ'եղնե Մհեր արև-աշխարհ:

Գեղ—գեղովի, քաղաք-քաղքով,  
Արտասուքով  
Կը պաղատեն Բրիտանոսին՝  
Չար Մհերին կապե-բանդե,  
Վոր դուրս չգա՝ աշխարհ քանդե:

Մեկ Համբարձման որ, յերբ Մհերի Դուռ  
Նորեն բաց յեղավ, Ազուավու անձով  
Մեկ ծերուն հովիվ ներս մտավ, տեսավ՝  
Մեկ պարթև վեճ-մարդ՝  
Գլխին սաղավարտ,  
Հեծած կրակ Ձին,  
Կայծակը ձեռին,  
Մթան մեջ կանդուն:

Հարցուց,— Ո՞վ ես դուն:  
— Մհերն եմ յես, Իսկթի տղան,  
Դու, հալեվոր, մւտի կուզաս:

— Լույս աշխարքեն, հովիվն ասավ:

— Աշխարքն Թն ե, ինչպես վոր եր.  
Հարցուց Մհեր:

— Հա, ենպես ե, ինչպես վոր եր.  
Համբավ տվավ հովիվը ծեր:

— Նոր՞ն ուսմիկ դառ կըզատի,  
Աշխարհ կուտե,

Ու կը մեա ինքն անոթի՞,  
Հարցուց Մհեր:

--- Հն, եզպես ե, Աշնանց Մհեր:

— Դե, դարձ գնա քո չար աշխարհ,  
Խոր դաւրութեով ասով Մհեր:

— Դու յերբ պիտի դուրս գաս աշխարհ,  
Հարցում արավ հովիվը ծեր:

— Յերբ շեղքն հասնի  
Վտակորին,  
Ռամիկ կանչե  
Մհերին:

Պատգամ տված Յասման Մհեր:

Ու դուրս յելավ հովիվն այրեն,  
Ապագու Քար դոցվեց նորեն

Մինչև ետը դեռ  
Ենտեղ է Մհեր.  
Հուրնի Ձին հեծած,  
Սողավարս կապած,  
Կայծակն աջ ձեռին,  
Վահան՝ ձախ ձեռին,  
Հագած կուռ ասպար.  
Միշտ ու միալար

Կըսպասե աննինջ՝  
Հողին ականջին  
Ու ականջը՝  
Ռամիկ կանչին:

Վ Ե Ր Զ — Յ Ե Ր Կ

Են որեն վեր անցան դարեր,  
Յերը ոամկասեր Մհերը վեա՝  
Անձավի մեջ բանդվեց անել,  
Անցան հազար տարիներ չար,  
Նորեն հազար չար տարիներ,  
Դառն ու դաժան, մութն ու մլար:  
Ռամիկը, հանց ճորտ ու ստրուկ,  
Բանվոր, մշակ, գերի-դրաստ,  
Կտառապեր ու կ'աշխատեր,  
Կտառապեր ու կը տքներ  
Արքաներու, իշխաններու,  
Սեպուհներու, հարուստներու  
Շահի համար անհազ, անկուշտ:  
Ամենուրեք ու ամեն տեղ  
Կ'չարչարվեր անդուլ, անխոնջ,  
Թովերու մեջ ու բովերու,  
Բարկ ու կրակ արևի տակ,  
Սառնամանի հողմերու տակ,  
Ու կմնար նորեն-նորեն  
Խեղճ, անոթի, մերկ ի մորեն,  
Անիրավունք ու անբաժին:

Տարվե տարի ու որև որ  
Լուծը դաժան՝  
Չար բանության  
Կը ծանրանար  
Ռամիկի վրան:  
Ու մինչև վոր շեղբը հասավ,  
Հասավ ոամիկի չոր վոսկորին:

Յերը շեղըն հասավ չոր վոսկորին  
Ահեղ ցավեն ճըչաց ոամիկի:  
Քաղաքներեն ու գյուղերեն,  
Ու ծովերեն ու բովերեն,  
Դարընոցներու հրեն-բոցեն  
Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,  
Աղքատ ու զուրկ ձեն տվեցին  
Մահի պատրաստ, ուղմահրավեր,  
Ձեն տվեցին ու կանչեցին  
Վեա Մհերին:  
Ամեն դիեն կանչերը հուր՝  
Հազար, հազար, հազար ու բյուր,  
Հանց ծովերու գոռ ալիքներ,  
Յեկան, յեկան ու կոփեցին  
Մհերի Դուռ, Ազոավու Բար:

Կսեց Մհեր մեջ անձավին  
Կանչերը հուր, հազար ու բյուր՝  
Մահի պատրաստ, ուղմահրավեր.  
Քաղուհն յերկաթ պրկեց Մհեր,  
Խուլ մորրկվեց սիրտն ու հոգին,

024

ու վրբնջաց Ձին հրեղեն  
 Ու ժաժեցին աշխարհ հիմեն  
 Ու ճեղքեցին քար-ապառաժ:  
 Թուր—Հավլունին կայծակ ավազ՝  
 Գուռ կայծակներ անեղաթափ,  
 Խորասկեցին կապանք ու գուռ,  
 Յելավ Մհեր արև-աշխարհ:  
 Ու վարզեցին, թուան, յեկան  
 Հազար-հազար, հազար ու բյուր  
 Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,  
 Ամեն դին թուան, յեկան  
 Երեն հազար, հազար ու բյուր  
 Ճորտ ու ըստրուկ, բանվոր, մշակ,  
 Ծով կապեցին Մհերի շուրջ,  
 Ծով կապեցին փոթորկաշունչ,  
 Գրոհ ավին բուրբ մեկտեղ՝  
 Արքաներու, իշխաններու,  
 Մեպուհներու, Ավատներու,  
 Հարուստներու վրա մեկտեղ.  
 Ավերեցին աշխարհը չար,  
 Ու ուսմկություն բերին աշխարհ,  
 Խամկի որենք ու իրավունք,  
 Վեր տեր գառնա սամիկն իրեն  
 Մուրթ վաստակին, արդար հացին:

Փրեկ 1919, Յերեվան 1937 թ



Պատ. խմբագրի՝ Ս ի Ր ա ս  
Տեխ. խմբագրի՝ Ս ա Ա լ Թ ու ւ ն յ ա ն  
Սրբագրի՝ Ա. Ա Ր դ ա ք ա ն յ ա ն

Գլավորինի լիազոր՝ Ա - 3053. Հրատ. 4412.

Պատվ. 1360. Տիրամ 6000.

Թուղթ 74 × 110, ապ. 2 3/4 մամ.

Մեկ մամ. 51,200 նիշ. հեղինակ. 1 3/4 մամ.

Հանձնված է արտադրության 23 դեկ. 1937 թ.

Ստորագրված է ապելու 25 փետրվարի 1935 թ.

Գինը 2 ա., կազմը 1—60 կ.

---

Պետհրատի | Երևան, Յերևան, Լենինի փող. 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0340288

135

33037